Պարույր Սևակ

Գարնանային

Գրված աշնանը 30-31.X

Գարունն է ցնծում իմ երկրում հիմա,
Գարունն է ցնծում իմ խելառ սրտում.
Ես զվարթ, անհոգ, հոգով անտրտում,
Մոռացած և՛ վիշտ, և՛ զրկանք, և՛ մահ,-
Ողջ գիշեր մենակ նստում եմ արթուն...
Ողջ գիշեր մենակ նստում եմ արթուն
Այս խոլ ժայռերի ծերպերում մթին...
Աստղերը երկնի կապտասառն ցրտում,
Առկայծում են խեղճ, դողում են տրտում,
Որպես համասփյուռ, համակ Ծիր Կաթին...
Որպես համասփյուռ, համակ Ծիր Կաթին,
Փայլում է խորունկ լիճը կապտաթույր.
Ալյակներով հեզ, խեղճ ու աղքատիկ,
Գեղեցիկ, ինչպես բյուրեղ ակաթի,
Արտասուքի պես անխառն ու մաքուր...
Արտասուքի պես անխառն ու մաքուր
Տենչանքներ հազար դարձնում են ինձ խենթ,
Գլխիս մեջ հազար խոհեր են ծագում,
Սրտիս մեջ շանթ ու որոտ հավաքում,
Հոգուս մեջ - և՛ սեր, և՛ զայրույթ, և՛ քեն...

Հոգուս մեջ և՛ սեր, և՛ զայրույթ, և՛ քեն,-
Հայացքս ահա դարձնում եմ գետին...
Թող սիրտս ու հոգիս քայլերգներ երգեն,
Թող լուսինն, աստղերն, լճերն ինձ լքեն,
Թող արյունոտված տապալվեմ գետին...
Թող արյունոտված տապալվեմ գետին,
Թող գահավիժեմ երկնքի ներքո,
Այս հոխորտացող, մոլեգնած գետի,
Հորձանքների մեջ թող հոգիս նետի
Իր քնարը խեղճ՝ աստղերին երգող...
Իմ քնարը խեղճ - աստղերին երգող,
Թող իր գունատված կանթեղը մարե,
Խտացած մթին գիշերվա ներկով,
Դիտի այս գետին - իր երգը երգող,
Այս մութ ծերպերից, ուր ես եմ թառել...
Այս մութ ծերպերից, ուր ես եմ թառել,
Դիտում եմ շիկնող հորիզոնը լուրթ,
Ուր որ արևը երանգ է դառել,
Եվ պայծառությամբ դեմքը զարդարել,
Բիլ հորիզոնի դեմքը կապտաթույր...
Բիլ հորիզոնի դեմքը կապտաթույր,
Շիկնած վաղորդյան մի պայծառությամբ,
Ինձ բացվող այգի լուրն է ավետում
Եվ արեգական հուրը վետվետուն
Նվիրում է ինձ մի ոսկե ջութակ...
Նվիրում է ինձ մի ոսկե ջութակ
Արևը վառվառ վաղ լուսաբացի...
Պճնում եմ նրան հակինթ ու սուտակ,
Ներքանուրբ լարեր - շարքով երկուտակ,
Եվ մի լար, սակայն, գոռ, ամպրոպածին...

Եվ մի լար, սակայն, գոռ, ամպրոպածին
Երգն իմ ջութակի խրոխտ է դարձնում,
Դարձնում է երգն իմ խենթ ու սլացիկ,
Ուր չի լսվելու մրմունջը լացի,
Ուր ձայնն իմ գոռ է և բարձրաբարձում:
Եվ արևի տակ այն բարձրաբարձում
Նորեն դիտում եմ հոխորտող գետին...
Նա այնտեղ, այնտեղ, նա այնտեղ - ցածում
Տիղմ, ցեխ է ուտում, փրփուր է լացում,
Սպառնալով, թե անդունդ կնետվի...
Սպառնալով, թե անդունդ կնետի
Ե՛վ իրեն խելառ, և՛ իրեր հազար,
Լեռնացած կարծես ոտքներին հետին
Ուղղվում է ահեղ քարափը դեպի,-
Իր ձեռնարկման մեջ կամակոր, ազատ...
Իր ձեռնարկման մեջ կամակոր, ազատ,
Գեթ մի պահ միայն վարանում է նա,
Հոգու տարերքին ապա հնազանդ,
Որպես սպասված մահվան ահազանգ
Նետվում է թափով առաջ... մեն-մենակ...
Նետվում է թափով առաջ... մեն-մենակ...
Թնդում է ձորը նրա սարսափից...
Կարծես զինավառ երկու գոռ բանակ,
Երկու գոռ բանակ, անթիվ, անքանակ,
Մոնչում են խոլ հարվածի թափից...
Մոնչում են խոլ հարվածի թափից
Քարաժայռերը վեհ ու լպրծուն...
Ես այս ծերպերից, ես այս քարափից,
Դիտում եմ ահա նրան ակնապիշ,
Նրա հետ կարծես իմ սիրտն է մրցում...

Նրա հետ կարծես իմ սիրտն է մրցում,
Ճչում է, գոչում, մռնչում կարծես -
Որպես մոլուցքի ահեղ մարմնացում,
Կարծես հրկիզված ջերմին հնոցում,
Խառնիխուռն, ինչպես մանրանիշ քարտեզ...
Խառնիխուռն, ինչպես մանրանիշ քարտեզ,
Բորբոքված, ինչպես թոքը իպրիտից,-
Ծառս-ծառս է լինում գարնան գետի պես,
Տղմտած դարձրած և՛ վարդ, և՛ պարտեզ...
Հանգստանում է, թավալվում գետին...
Հանգստանում է, թավալվում գետին
Իմ հոգին խելառ, խելագար ու խենթ.
Հայացքը հառած մի ինչ-որ կետի.
Աչքի աղեղը երեքծայր նետի
Սլաքը պահած իր բիբերի մեջ...
Սլաքը պահած իր բիբերի մեջ,
Մի վայրկյան միայն կարծես թե նիրհում,
Ննջում է մի պահ...Բայց այդ նիրհի մեջ
Նա զրահներն իր մաքրում է անվերջ,
Ինչպես խենթավուն ասպետը հնում...
Ինչպես խենթավուն ասպետը հնում,
Այս գետը ահա, իր գարնանային,
Իր գարնանային հեղեղին - ձիուն,
Իր խոլ նժույգին պահ հետո զինում,
Մարտի է նետում մոլեգնած, նայի՛ր...
Մարտի է նետում մոլեգնած, նայի՛ր...
Որքա՜ն ամեհի, որքա՜ն փոթորկուն...
Եվ անկասկած, որ սրտի մեջ նա իր
Կրում է նաև սիրտն իմ ամեհի
Իր խոլ, մոլեգնած ջրերի խորքում...

Իր խոլ, մոլեգնած ջրերի խորքում
Նա գանձեր ունի լուծարկված հանքի,
Ունի խեղդըված հուզումներ անգին,
Ինչպես չգրված երգերն իմ հոգու,
Ինչպես գանգիս մեջ խոհեր ու խոկում...
Ինչպես գանգիս մեջ խոհեր ու խոկում
Խառնվել են այնպես նրա ընթացքին,
Նրա ջրերի թանձրացած խորքում,
Ալիքների մեջ նրա փոթորկուն,
Նրա հեղեղյա, կատաղած վազքին...
...Նա իր հեղեղյա կատաղած վազքով
Շատ հաճախ, հաճախ մնում է անքուն,
Շատ հաճախ նա իր անկանգ ընթացքով
Գլորվում է սուր ժայռերից այն կողմ,
Ինչպես իմ հոգին - անկումից անկում...
Ինչպես իմ հոգին - անկումից անկում...
Գլորվում է նա ժայռից ժայռ այնպես,
Ինչպես հայացքն իմ աչքերի անքուն,
Այնպես նա ժայռից ձորակն է ցատկում,
Եվ շարունակում նորից իր ճամփեն...
Շարունակելով նորից իր ճամփեն
Թփեր է բերում, տաշեղներ - հերթով.
Ափերն է ծեծում, հատակն է քերում,
Տիղմ ու հող կոխած անքուն աչքերում,
Մռնչում, փնչում, անցնում է հետո...
Մռնչում, փնչում, անցնում է, հետո
Բերում է մի դի խեղդված աղջկա...
Ինչպես մի փետուր անցնում է գետով
Մի հսկա բարդի - ծիլ ու արմատով,
Ծիլ ու արմատով - հողից աղճատած...

. . . . . .

. . . . . .

. . . . . .

հայացքը խեղդված աղջկա

Հանում է կարծես ինձ խոր մի քնից...

Որպես մի, հենց նոր թողված մահճակալ

Ուռչում է կուրծքս... ու սիրտս չկա...

...Նախատվում եմ ես այն աղջկանից...

Նախատվում եմ ես այն աղջկանից...

Մինչդեռ հոսում է լեռներից անառ

Այն հեղեղը գոռ, մռնչում, փնչում,

Որ իր համար նոր, նոր հուն է բացում

Իր կատաղությամբ՝ անկանգ ու համառ...

Իր կատաղությամբ - անկանգ ու համառ

Նա կյանք է բերում, ծնունդ ու ծաղիկ.

Նա չոր ու խոպան դաշտերի համար,

Արտերի համար, արտերին ցամաք

Բերում է խնդում, ծիծաղ ու ծաղիկ...

Իսկ ես հիշում եմ մի խեղճ աղջկա...

Որ սիրում էր ինձ... ու հիմա չկա...

Մռնչա՛, իմ սիրտ, գարունդ է քանզի,

Հուսանք, որ շուտով ամառդ կըգա...

-Իսկ դո՛ւ, սիրելիս, դո՛ւ ինձ մի տանջիր...